

Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ Զարմինե Զեյթունցյանի աշխատանքային այցը Վայոց ձորի մարզ

04.12.2017



Մ.թ. նոյեմբերի 2-3-ը աշխատանքային այցով ՀՀ Վայոց ձորի մարզում էր գտնվում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ Զարմինե Զեյթունցյանը, աշխատանքային խմբով՝ կոմիտեի աշխատակիցներ և ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի զբոսաշրջության կառավարման բաժնի ուսանողներ: Այցի նպատակը գինու տուրիզմի զարգացման համար երթուղիների մշակման նպատակով տեղում ուսումնասիրություն կատարելը և մարզային ռեսուրսին ծանոթանալն էր:

Այցի շրջանակում Զ. Զեյթունցյանը հանդիպել է ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Մարգարյանի հետ, որի ընթացքում քննարկվել են գինու զբոսաշրջության զարգացման մարզային հնարավոր երթուղիների մշակման հետ կապված հարցեր:

Այնուհետև Զ. Զեյթունցյանը մարզպետարանի աշխատակիցների ուղեկցությամբ եղել է մարզի գինեգործարաններում, գինու տնայնագործական արտադրամասերում, գինու համտեսի սրահներում, հյուրաստներում և պատմամշակութային կոթողներում, որոնք պատմականորեն կապված են գինու արտադրության մշակույթին:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել մինչև 2017 թվականի ավարտը մշակել գինու տուրիզմի մարզային երկու նոր երթուղիներ